ՀԱՍՏԱՏՎԱԾ Է «ՅՈՒՄԱԿՍ» ՍՊԸ-ի
տնօրենի կողմից 27.09.2021 թ. կայացված թիվ 47 -Լ հրամանով
տնօրեն՝ ----------
Մ. Յուխանան

«ՅՈՒՄԱԿՍ ԱՌԱՔՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ»

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. **«ՅՈՒՄԱԿՍ ԱՌԱՔՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ»**(այսուհետ՝ Կանոններ) սահմանում են **«Յումակս»** ՍՊԸ-ի կողմից իրականացվող տրանսպորտային առաքման ծառայությունները, դրանց բնույթը, մատուցման կարգը և պայմանները:

1.2. **Սույն կանոններում կիրառվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը.**

1.3. **«Առաքող»**՝«Յումակս» ՍՊԸ, որը պարտավորվում է Պատվիրատուի հաշվին և (կամ) Պատվիրատուի անունից կազմակերպել Պատվիրատուի կողմից ներկայացված հայտին համապատասխան բեռի **(այսուհետ՝ նաև Բեռ)** փոխադրման հետ կապված ծառայություններ:

1.4. **«Պավիրատու»**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, որը Առաքողի հետ կնքել է ներկայացված հայտին համապատասխան բեռի (այսուհետ՝ նաև Բեռ) առաքման հետ կապված ծառայություններ մատուցելու պայմանագիր:

1.5. **«Տրանսպորտային առաքման հայտ»**՝(այսուհետ՝ Հայտ) Կանոններով նախատեսված պահանջներին համապատասխան Բեռի առաքման պատվերի վերաբերյալ Պատվիրատուի կողմից Առաքողին ներկայացվող փաստաթուղթ է, որը հիմք է հանդիսանում Տրանսպորտային առաքում իրականացնելու համար:

1.6. **«Առաքման վճար»**՝ Առաքողի կողմից Պայմանագրով սահմանված ծառայությունների դիմաց Պատվիրատուից ստացվող վարձատրության (Կանոնների գին) և այդ ծառայությունների իրականացման համար Պատվիրատուի հաշվին Առաքողի կողմից կատարվող վճարումների հանրագումարն է:

1.7. **«Պայմանագիր»**՝ Առաքողի և Պատվիրատուի միջև սահմանած օրինակելի ձևին համապատասխան կնքված Տրանսպորտային առաքման ծառայությունների մատուցման պայմանագիր.

1.8. Կանոնների շրջանակներում Առաքողն այլ անձանց և մարմինների, ինչպես նաև փոխադրողի հետ իրավահարաբերություններում գործում է Պատվիրատուի հաշվին և (կամ) Պատվիրատուի անունից:

1.9. Կանոնների հիման վրա Տրանսպորտային առաքման կազմակերպման նպատակով Առաքողի կողմից Պատվիրատուի հաշվին և (կամ) Պատվիրատուի անունից իրականացված միջոցառումների արդյունքում անմիջականորեն իրավունքներ ու պարտականություններ են առաջանում Պատվիրատուի համար:

1.10. Առաքվող Բեռի հանձնման-ընդունման հարաբերությունները ենթակա են կարգավորման Պատվիրատուի անունից և (կամ) նրա հաշվին կնքված Բեռի փոխադրման Կանոններով և (կամ) փոխադրման հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով և գործարար շրջանառության սովորույթներով: Առաքողը փոխադրման իրավահարաբերության շրջանակում կողմ չի հանդիսանում և այդ մասով որևէ պատասխանատվություն չի կրում:

1.11. Սույն կանոնները ընդունվել են Քաղաքացիական օրենսգրքի, կարգավորող իրավական այլ ակտերի և կանոններին համապատասխան՝ ի կատարումն դրանց պահանջների:

2. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՌԱՔՄԱՆ ՀԱՅՏԻ, ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Հայտի ձևը և բովանդակությունը սահմանվում են Կանոնների անբաժանելի մասը հանդիսացող հավելված 1-ով, որը ներկայացվում է էլեկտրոնային փոստի միջոցով՝ ուղարկելով Պայմանագրում նշված Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին:

2.2 Եթե սույն Կանոնների Հավելված 1-ում ներկայացված հայտի փոխարեն Առաքողը և Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով փոխանակված բավարար տվյալների արդյունքում համաձայնության են գալիս տրանսպորտային առաքումն իրականացնելու համար, ապա առաքման պատվերը՝ հայտը, համարվում է պատշաճ ընդունված:

2.3 Հայտը պետք է ներկայացվի Առաքողին ոչ ուշ, քան բեռի բարձման գործընթացն սկսելուց 10 (տասն) օր առաջ:

2.4 Մինչ Հայտի հաստատումը, Առաքողը Պատվիրատուին ներկայացնում է տվյալ առաքման կազմակերպման գնային առաջարկը (Առաքման վճարի չափ): Պատվիրատուն 1 (մեկ) օրվա ընթացքում պարտավոր է հաստատել ներկայացված գնային առաջարկը կամ հրաժարվել տվյալ առաքման պատվերից՝ Հայտում լրացուցիչ գրառման և այդ տարբերակով Հայտը հետ ուղարկելով կամ էլեկտրոնային փոստով ծանուցման միջոցով: Պատվիրատուի կողմից այդ ժամկետում գնային առաջարկի վերաբերյալ Առաքողին որևէ տեղեկություն, առարկություն չհայտնելու դեպքում գնային առաջարկը համարվում է չընդունված, իսկ տրանսպորտային առաքման պայմանագիրը՝ չկնքված, որից հետո Առաքողը պարտավոր չէ միջոցներ ձեռնարկել Պատվիրատուի՝ տվյալ հայտի հիման վրա առաքումը կազմակերպելու ուղղությամբ:

2.5 Ներկայացված Հայտը Առաքողի կողմից հաստատվում է Հայտի վրա կնիք և իրավասու անձի ստորագրություն դնելու և այն Առաքողին ուղարկելով կամ հաստատման կամահայտնության մասին Առաքողին էլեկտրոնային նամակ ուղարկելու միջոցով կամ փաստացի առաքումը սկսելով:

2.6 Ներկայացված Հայտը Առաքողի կողմից սույն կանոնների 2.5. կետով սահմանված որևէ ձևով չհաստատելուդեպքում՝ անկախ չհաստատման պատճառներից, Հայտը համարվում է մերժված: Մերժված հայտի մասով Առաքողի և Պատվիրատուիմիջև որևէ հարաբերություն չի ծագում, և Առաքողից և Պատվիրատուից որևէ մեկը դրա կապակցությամբ չի կարող մյուս կողմին ներկայացնել որևէ պահանջ:

3. ԱՌԱՔՈՂԻ ԵՎ ՊԱՏՎԻՐՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 **Առաքողն իրավունք ունի՝**

3.1.1 Պարտականությունների կատարմանն իր հայեցողությամբ ներգրավել երրորդ անձանց.

3.1.2 Պատվիրատուի անունից և (կամ) Պատվիրատուի հաշվին ընտրելու Հայտում նշված բեռի փոխադրումն իրականացնող փոխադրողին.

3.1.3 Պահանջելու Պատվիրատուից Առաքողին կամ փոխադրողին տրամադրել Բեռի քանակական և որակական հատկանիշների, հատկության և դրա փոխադրման պայմանների, առանձնահատկությունների վերաբերյալ անհրաժեշտ և հավաստի փաստաթղթեր և/կամ տեղեկատվություն.

3.1.4 Կանոններով նշված փաստաթղթերի և/կամ տեղեկատվության չտրամադրման կամ ոչ լրիվ տրամադրման դեպքում չկատարելու Պայմանագրից բխող իր պարտականությունները, մինչև Պատվիրատուի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի կամ տեղեկատվության տրամադրումը.

3.1.5 Պահանջելու Պատվիրատուից Տրանսպորտային առաքման հաշվարկային փաստաթղթում և (կամ) հարկային հաշվում **(այսուհետ՝ Հաշիվ-ապրանքագիր)** նշված արժեքին և ժամկետներին համապատասխան վճարել Առաքման վճարը, կատարել Տրանսպորտային առաքման այլ վճարումները, ինչպես նաև վճարել Կանոնների 4.3 կետով նախատեսված գումարը.

3.1.6 պահելու Բեռն ի ապահովումն Պայմանագրով վճարման ենթակա գումարների կատարման/վճարման, մինչև վճարման պարտավորության կատարումը՝ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին.

3.1.7 Կանոնների 3.1.6 կետում նշված միջոցառումների կիրառման դեպքում պահանջելու Պատվիրատուից վճարել Բեռի պահման կապակցությամբ կատարված բոլոր ծախսերը.

3.1.8 Փոխադրման նպատակով Բեռը փոխադրողին հանձնելու ժամանակ Կանոնների 3.4.5 կետով նախատեսված Պատվիրատուի նախապատրաստական աշխատանքներում որևէ թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջելու Պատվիրատուից վերացնել տվյալ թերությունները.

3.1.9 Ցանկացած պահի միակողմանի ավելացնել Առաքման վճարը, եթե Պայմանագրով նախատեսված ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ Պատվիրատուի հաշվին կատարվող վճարումներն ավելացել են:

3.2 **Առաքողը պարտավորվում է՝**

3.2.1 կազմակերպել Տրանսպորտային առաքումը Հայտին համապատասխան՝ պահպանելով Հայտում սահմանված պայմանները.

3.2.2 կազմակերպել Տրանսպորտային առաքումը Պատվիրատուի կողմից ներկայացված տեղեկատվության և (կամ) փաստաթղթերի տվյալների հիման վրա.

3.2.3 յուրաքանչյուր Հայտով փոխադրողի միջոցով ընտրել պիտանի և սարքին տրանսպորտային միջոցներ, որոնք համապատասխանում են Պատվիրատուի կողմից Հայտում նշված բեռի առաքմանը ներկայացվող պահանջներին.

3.2.4 Պատվիրատուին հայտնել տրամադրված փաստաթղթերի և/կամ տեղեկատվության, ինչպես նաև Հայտի մեջ հայտնաբերված թերությունների մասին, իսկ ոչ լրիվ լինելու դեպքում Պատվիրատուից պահանջել ներկայացնել անհրաժեշտ լրացուցիչ տվյալներ:

3.3 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.3.1 Պատվիրատուի կողմից Սույն կանոնների 2.4 կետով սահմանված կարգով գնային առաջարկի հաստատումից հետո մինչև Առաքողի կողմից Հայտի հաստատումը հրաժարվել ներկայացված Հայտից՝ հատուցելով Առաքողի կողմից փաստացի կատարված ծախսերը կամ կրած իրական վնասները.

3.3.2 Չհաստատել Առաքողի կողմից ներկայացված գնային առաջարկն ու այդ կերպ հրաժարվել իր կողմից ներկայացված հայտում նշված առաքման պատվերից.

3.3.3 պահանջելու Առաքողից պատշաճ կատարել Կանոններով ստանձնած պարտավորությունները.

3.3.4 պահանջելու Առաքողից տրամադրել տեղեկատվություն Տրանսպորտային առաքման ընթացքի վերաբերյալ առանց միջամտելու Առաքողի կողմից իրականացվող բնականոն գործունեությանը:

3.4 **Պատվիրատուն պարտավորվում է՝**

3.4.1 Առաքողի կողմից Տրանսպորտային առաքման պայմանների ճիշտ ընտրությունն ապահովելու համար տրամադրել բեռի քանակական և որակական հատկանիշների, հատկության և դրա փոխադրման պայմանների, առանձնահատկությունների վերաբերյալ Տրանսպորտային առաքման համար անհրաժեշտ և հավաստի փաստաթղթեր և (կամ)

տեղեկատվություն, ինչպես նաև բեռի առաքումը պատշաճ կազմակերպելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ.

3.4.2 Պատշաճ և ամբողջական լրացնել Հայտը՝ պատասխանատու լինելով դրանում նշված տեղեկությունների լրիվության ու հավաստիության համար.

3.4.3 Առաքողի պահանջով տրամադրել լիազորագիր, այդ թվում՝ բեռը փոխադրողին, եթե դա անհրաժեշտ է Առաքողին Պայմանագրի հիման վրա իր պարտականությունները կատարելու համար.

3.4.4 Տրանսպորտային առաքման հաշվարկային փաստաթղթում և (կամ) Հաշիվ-ապրանքագրում նշված տվյալներին համապատասխան և Կանոններով սահմանված ժամկետներում վճարել Առաքման վճարը, կատարել Առաքման կազմակերպման համար անհրաժեշտ այլ վճարումները, ինչպես նաև Առաքողի պահանջի դեպքում վճարել Կանոնների 4.3 կետով նախատեսված գումարը.

3.4.5 Փոխադրման նպատակով մինչև Հանձնման վայր տրանսպորտային միջոցների հասնելը, Բեռը նախապատրաստել Տրանսպորտային առաքման (լցնել տարաների մեջ, փաթեթավորել, բեռնել, նախապատրաստել փոխադրման բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, բեռնման և բեռնաթափման վայր հասցնելու իրավունքի անցաթղթերը և այլն).

3.4.6 Սեղմ ժամկետում վերացնել Կանոնների 3.4.5 կետով նախատեսված նախապատրաստական աշխատանքների թերությունները (Առաքողի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ) և Բեռը հանձնել փոխադրման պատշաճ՝ նմանատիպ բեռների փոխադրման համար ներկայացվող բոլոր պահանջներին համապատասխանող վիճակում.

3.4.7 Կատարել Բեռի առաքմանը խոչընդոտող՝ Կանոնների 3.4.5 կետով նախատեսված նախապատրաստական աշխատանքների և (կամ) այլ թերությունների, Բեռը փոխադրման չներկայացնելու կամ ուշացումով ներկայացնելու կապակցությամբ Բեռի առաքման սահմանված ժամկետների խախտման և/կամ Բեռը փոխադրողի կողմից հաշվարկված տույժերի և (կամ) այլ գումարների վճարումները.

3.4.8 Ամբողջ ծավալով կրել պատասխանատվություն իր և (կամ) իր անունից հանդես եկող անձանց գործողությունների (անգործության) հետևանքով առաջացած հանգամանքների համար.

3.4.9 Իրականացնել Բեռի բեռնումը Բեռին ներկայացվող պահանջներին համապատասխան:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1 Առաքողը և Պատվիրատուն սույնով ընդունում են, որ Առաքման վճարը գոյանում է հաշվի առնելով նաև Տրանսպորտային առաքման ծառայության իրականացման համար այլ սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների արժեքը, որի համար վճարում կատարում է Առաքողը Պատվիրատուի հաշվին, ուստի տրանսպորտային առաքման

պայմանագրի կամ Կանոններին միանալու կամ Կանոնները կիրառելու վերաբերյալ որևէ գործարք կնքելով՝Պատվիրատուն տալիս է իր անվերապահ համաձայնությունն առ այն, որ Առաքողն իր ցանկությամբ ցանկացած պահի միակողմանի ավելացնի Առաքման վճարի չափը, եթե Տրանսպորտային առաքման իրականացման համար անհրաժեշտ այլ սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների արժեքները փոփոխվել են, և այլ ծառայությունների արժեքների փոփոխությունները ազդեցություն են ունեցել Պատվիրատուի հաշվին Առաքողի կողմից կատարվող վճարումների չափի վրա:

4.2 Հայտում կանխավճարի գումար և դրա վճարման ժամկետ նշվելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է սահմանված ժամկետում վճարել կանխավճարի գումարը: Կանխավճարը չվճարելը հիմք է Առաքողի կողմից իր պարտականությունները չկատարելու և (կամ) դրանք կասեցնելու համար, եթե Հայտում այլ բան սահմանված չէ: Հայտում սահմանված տրանսպորտային առաքման վճարի մնացած մասը Պատվիրատուն պարտավոր է վճարել Առաքողի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հաշվարկային փաստաթուղթը (հարկային հաշիվը) դուրս գրվելուց (ներկայացվելուց) հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Վճարման ենթակա գումարների կետանցի յուրաքանչյուր օրվա համար Առաքողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել վճարման ենթակա գումարի 0.13 % (զրո ամբողջ տասներեք տոկոս) գումար:

4.4 Հայտում ներառված տեղեկությունների անհամապատասխանության կամ փոփոխման դեպքում որոշված վճարման ենթակա գումարը կարող է փոփոխվել Առաքողի կողմից:

4.5 Հայտում կանխավճարի գումար և վճարման ժամկետ չնշվելու դեպքում՝ Պատվիրատուն պարտավոր է Տրանսպորտային առաքման դիմաց վճարել Առաքողի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հաշվարկային փաստաթուղթը (հարկային հաշիվը) դուրս գրվելուց (ներկայացվելուց) հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԱՌԱՔՈՂԻԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կանոններով ստանձնած պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Առաքողը պատասխանատվություն է կրում Պատվիրատուի հանդեպ այնքանով, որքանով Առաքողի և/կամ Պատվիրատուի հանդեպ պատասխանատվություն է կրում համապատասխան փոխադրողը, որի հետ Պատվիրատուի հաշվին և (կամ) Պատվիրատուի անունից Առաքողը կնքել է փոխադրման պայմանագիրը, կամ այլ հիմքերով Պատվիրատուն գտնվում է Կանոններով սահմանված Բեռի փոխադրման հարաբերություններում:

5.2 Առաքողը պատասխանատվություն չի կրում (ազատվում է պատասխանատվությունից) բոլոր այն դեպքերում, որոնցով ազատվում է փոխադրողն ըստ փոխադրման Կանոնների (կոնոսամենտ, տրանսպորտային բեռնագիր և այլն) դրույթների համաձայն:

5.3 Առաքողը պատասխանատվություն չի կրում (ազատվում է պատասխանատվությունից) Կանոններով ստանձնած պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, եթե դա պայմանավորված է տարանցիկ և (կամ) այլ երկր(ներ)ի (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) վարչարարություն իրականացնող և (կամ) իրավասու իշխանական մարմնի գործողությունների և (կամ) հայեցողական լիազորությունների կիրառման, ինչպես նաև կայացված որոշումների (բանավոր և/կամ գրավոր) և դատական ակտերի հետևանքով:

5.4 Կանոնների 5.3 կետով նախատեսված դեպքերում փոխադրողի կողմից բեռը իրավասու մարմնի պահանջով որևէ երրորդ անձի (այդ թվում՝ իշխանական լիազորություններով օժտված մարմնի, պաշտոնատար անձի) հանձնելու դեպքում Առաքողը համարվում է Կանոններով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարած:

5.5 Առաքողը պատասխանատվություն չի կրում (ազատվում է պատասխանատվությունից) Կանոններով ստանձնած պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, այդ թվում՝ Բեռի կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար, եթե դա տեղի է ունեցել Պատվիրատուի կողմից իր Պայմանագրային պարտականությունների, այդ թվում՝ Կանոնների 3.4.5 կետով նախատեսված, չկատարման և (կամ) ոչ պատշաճ կատարման արդյունքում:

5.6 Առաքողը պատասխանատվություն չի կրում (ազատվում է պատասխանատվությունից) Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի և (կամ) տեղեկատվության սխալ կամ թերի լինելու կամ տրամադրման ենթակա փաստաթղթերի չտրամադրման պատճառով առաջացած հետևանքների համար:

5.7 Կանոնների 5.5 և 5.6 կետերով նշված դեպքերում հնարավոր իրավական հետևանքների համար, այդ թվում՝ իրավասու մարմինների կողմից կիրառվելիք տուժանքների (տույժեր, տուգանքներ և հարկադրանքի այլ միջոցներ) պատասխանատվությունը կրում է Պատվիրատուն: Եթե նշված միջոցները որևէ սուբյեկտի կողմից որևէ հիմքով կիրառվում են Առաքողի նկատմամբ, ապա Պատվիրատուն պարտավորվում է դրանց չափով հատուցում տրամադրել Առաքողին:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

6.1 Կողմերն իրավասու են միակողմանի հրաժարվել Պայմանագրային պարտավորությունների կատարումից: Պայմանագրային պարտավորություններից

միակողմանի հրաժարվելը կատարվում է մյուս կողմին գրավոր 30 (երեսուն) օր առաջ, սակայն ոչ ուշ քան Հայտում նշված Բեռի բարձման պահից 7 (յոթ) օր առաջ, տեղեկացնելու միջոցով: Պայմանագրային պարտավորություններից միակողմանի հրաժարվելը հանգեցնում է Պայմանագրի վաղաժամ լուծման: Պատվիրատուի նախաձեռնությամբ Պայմանագրի վաղաժամ լուծման դեպքում, Պատվիրատուն պարտավոր է Առաքողին վճարել Պայմանագրի կատարման նպատակով Առաքողի կողմից փաստացի կատարված ծախսերի և մատուցված ծառայությունների դիմաց:

6.2 Պատվիրատուի կողմից Կանոնների 6.1 կետով նախատեսված ժամկետների խախտմամբ Պայմանագրից միակողմանի հրաժարվելու դեպքում՝ Առաքողն իրավունք ունի հրաժարվելու պահից 10 (տասն) օրվա ընթացքում Պատվիրատուից պահանջել վճարելու Հայտում նշված Առաքման վճարի 25 % (քսանհինգ տոկոսի) չափով տուգանք:

6.3 Որևէ պատճառով Առաքողի կողմից պատվերի կատարման անհնարինության մասին Պատվիրատուին նախազգուշացնելը հավասարազոր է Պայմանագրից միակողմանի հրաժարմանը: Այս դեպքում Առաքողը Պատվիրատուի նկատմամբ որևէ պարտավորություն, այդ թվում՝ ֆինանսական, չի կրում:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պատվիրատուն լիազորում է Առաքողին Պատվիրատուի անունից և (կամ) հաշվին կատարել Տրանսպորտային առաքման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, այդ թվում ստորագրել համապատասխան պայմանագիր:

7.2 Առաքողը և Պատվիրատուն իրավասու են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման և (կամ) իրավունքների իրացման նպատակով երրորդ անձանց տրամադրել լիազորագիր՝ իրենց անունից և հանձնարարությամբ հանդես գալու համար:

7.3 Կանոնների գործողության շրջանակներում Առաքողից և Պատվիրատուից յուրաքանչյուրը մյուս կողմի տրամադրած տեղեկատվությունը, որն անկախ ձևից կարող է պարունակել երրորդ անձանց անհայտ տեխնիկական, ֆինանսական, առևտրային, կազմակերպչական և այլ տեղեկատվություն, երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, պարտավորվում է չբացահայտել կամ այլ կերպ չտրամադրել երրորդ անձանց:

7.4 Բեռի առաքման ժամկետների մեջ չեն ներառվում այլ երկրների վարչական մարմինների կամ այլ իրավասու մարմինների պահանջով բեռի առաքումն իրականացնելու համար համապատասխան փաստաթղթերի ձեռքբերման կամ լրացուցիչ գործողությունների կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը: Այդ պարագայում առաքման ժամկետի հետաձգման դեպքում Առաքողը համարվում է պարտականությունները պատշաճ կատարած:

7.5 Տրանսպորտային առաքման ծառայությունների՝ Պատվիրատուի կողմից ընդունվելու փաստը հաստատվում է Տրանսպորտային առաքման դիմաց ներկայացված Հաշիվ-ապրանքագիրը Պատվիրատուի կողմից ստորագրելով:

7.6 Պատվիրատուն պարտավորվում է Տրանսպորտային առաքման Հաշիվ-ապրանքագիրն ստանալուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում այն ստորագրել, իսկ դիտողություններ և առարկություններ ունենալու դեպքում ներկայացնում է գրավոր բացատրություն:

7.7 Եթե Պատվիրատուն Տրանսպորտային առաքման Հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում այն չի ստորագրում և չի ներկայացնում դիտողություններ և առարկություններ, ապա Տրանսպորտային առաքման ծառայությունները համարվում են պատշաճ կատարված և Պատվիրատուի կողմից ընդունված:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԸ

8.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Առաքողը և Պատվիրատուն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդօրինակ չկատարումը եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը Առաքողը և Պատվիրատուն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի հանգամանքներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, համաճարակը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների իրավական ակտերը, ՀՀ իրավասու մարմինների կողմից կայացված իրավական, վարչարարական ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կանոններով ձեռք բերած պարտավորությունների կատարումը:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Պայմանագրի կնքման պահից ուժը կորցրած են համարվում Պայմանագրի կնքման նպատակով Առաքողի և Պատվիրատուի միջև վարված բոլոր բանակցությունները, որոնք չեն ամրագրվել Պայմանագրով:

9.2 Պայմանագրի լուծումը հիմք չէ մինչ այդ առաջացած դրամական պարտավորությունների չկատարման համար:

9.3 Կանոնները ուժի մեջ են մտնում 2021 թվականի սեպտեմբերի 16-ից և կողմերի համար պարտադիր են դառնում տրանսպորտային առաքման պայմանագրի կամ Կանոններին միանալու կամ Կանոնները կիրառելու վերաբերյալ որևէ գործարքի կնքման պահից:

Հավելված No. 1/ Приложение No. 1

«------» ՍՊ ընկերության և «_____» ____ _____ ընկերության միջև «__» _____ 20__ թվականին կնքված No.___պայմանագրի:

Ք. _____	Հայտ /No. _____	«___և_____.20___թ.
1	Բեռի ընդունման վայրը և ամսաթիվը	
2	Առաքմանն շանակմանվայրը	
3	Բեռինկարագիրը *անվանումը-* *ապրանքիկողը ԱՏԳԱԱ(ТНВЭД)* *քանակը* *ծավալը* *փաթեթավորումը* *վտանգավորությանկարգը* *ջերմաստիճանայինռեժիմը* *այլ տվյալներ*	
4	Ստացողի անունը և հասցեն	
5	*Տրանսպորտային միջոց(ներ)ի տեսակը, քանակը*	
6	*Տրանսպորտային միջոցների տրամադրման, բեռնման ու բեռնաթափման աշխատանքների իրականացնելու պայմաններ*	
7	*Բեռը Տրանսպորտային փոխադրման նախապատրաստելու պայմաններ*	
9	Մաքսային կամ այլ ձևակերպումների համար պահանջվող հրահանգներ	
10	*Երթուղի*	
11	*Առաքման վճարի չափը և վճարման պայմանները*	

13	*Լրացումներ*	

Առաքող
«ՑՈՒՄԱՔՍ» ՍՊԸ
Տնօրեն _____

Պատվիրատու
_____ՍՊԸ
Տնօրեն _____

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՌԱՔՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« ---»□ «----»202«---»թ□

«Յումակս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝00004199, այսուհետ՝ Առաքող)՝ ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Մ. Յուխանանի, մի կողմից, և

"----------" **ՍՊ ընկերությունը** (ՀՎՀՀ՝ -------, այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն ----------ի, մյուս կողմից (երկու կողմերը միասին հիշատակվելու դեպքում՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Առաքողը պարտավորվում է Պատվիրատուի հաշվին և (կամ) Պատվիրատուի անունից կազմակերպել Պատվիրատուի կողմից ներկայացված հայտին համապատասխան բեռի (այսուհետ՝ նաև Բեռ) փոխադրման հետ կապված ծառայություններ (այսուհետ նաև՝ Տրանսպորտային առաքում),իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց:

2. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Յուրաքանչյուր Առաքման վճարը Պատվիրատուի կողմից ներկայացված Հայտում ներառված տեղեկությունների հիման վրա առաջարկվում է Առաքողի կողմից և Պայմանագրով սահմանված կարգով հաստատվում Պատվիրատուի կողմից:

2.2. Հայտում կանխավճարի գումար և վճարման ժամկետ չնշվելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է Տրանսպորտային առաքման դիմաց վճարել Առաքողի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հաշվարկային փաստաթուղթը (հարկային հաշիվը) դուրս գրվելուց (ներկայացվելուց) հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Պայմանագրի փոփոխություններն ու լրացումները կատարվում են գրավոր, որի վերաբերյալ կազմված փաստաթղթերը որպես հավելված կցվում են Պայմանագրին՝ դառնալով դրա անբաժանելի մասը:Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում: Սույն պայմանագրի նկատմամբ կիրառելի իրավունք է համարվում ՀՀ օրենսդրությունը:

3.2. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառելի են http://www.umaks.am/ պաշտոնական կայքում տեղադրված *«ՅՈՒՄԱԿՍ ԱՌԱՔՄԱՆ ԿԱՆՈՆԵՐ»-ը*(այսուհետ՝ Կանոններ): Սույն պայմանագրի ստորագրմամբ կողմերը հավաստում են, որ ծանոթացել են Կանոններին և տալիս են իրենց համաձայնությունը Կանոնների՝ սույն պայմանագրով ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվելու վերաբերյալ:

3.3. Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.4. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի Հավելվածով սահմանված պարտավորության կատարումը:

5□ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՌԱՔՈՂ "ՅՈՒՄԱՔՍ" ՍՊԸ Հասցե՝---------- ՀՎՀՀ՝---------- Բանկ՝«---------- » Հ/Հ՝---------- Տնօրեն՝---------- Ա. Ղազարյան	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ "----------" ՍՊԸ Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, ---------- ՀՎՀՀ՝ ---------- Տնօրեն՝----------

Հավելված No. 1/ Приложение No. 1

«------» ՍՊ ընկերության և «_____» ____ _____ ընկերության միջև «__» _____ 20__ թվականին կնքված No.___պայմանագրի:

Ք. _____ _____.20___թ.	*Հայտ /No. _____*	*«___է*
	Բեռի ընդունման վայրը և ամսաթիվը	
	Առաքմաննշանակմանվայրը	
	Բեռինկարագիրը *անվանումը-* *ապրանքիկոդը ԱՏԳԱԱ(ТНВЭД)* *քանակը* *ծավալը* *փաթեթավորումը* *վտանգավորությանկարգը* *ջերմաստիճանայինռեժիմը* *այլ տվյալներ*	
	Ստացողի անունը և հասցեն	
	Տրանսպորտային միջոց(ներ)ի տեսակը, քանակը	
	Տրանսպորտային միջոցների տրամադրման, բեռնման ու բեռնաթափման աշխատանքների իրականացնելու պայմաններ	
	Բեռը Տրանսպորտային փոխադրման նախապատրաստելու պայմաններ	
	Մաքսային կամ այլ ձևակերպումների համար պահանջվող հրահանգներ	
0	*Երթուղի*	
1	*Առաքման վճարի չափը և վճարման պայմանները*	
3	*Լրացումներ*	

Առաքող
«ՅՈՒՄԱՔՍ» ՍՊԸ
Տնօրեն _____

Պատվիրատու
_____ՍՊԸ
Տնօրեն _____